

Շրջակա միջավայրի վրա ազդեցության զննահատման հաշվետվություն

Կոտայքի մարզ Արուսյան քաղաքի Բարեկամության փողոց 2/1
հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

Քաղաքացի Արմեն Անդրեասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Հապավումներ	3
1.2	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.3	Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.3.1	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	7
	Էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ.....	9
1.3.2	Շինարարական աշխատանքների իրականացման աշխատանքային ժամանակացույց.....	13
1.3.3	Կադրային ապահովում և շինտեխնիկա	13
1.3.4	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	13
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	18
2.1	ԿԼԻՄԱ.....	23
2.2	ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ	26
2.3	ՀՈՂԵՐ	27
2.4	ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	27
2.8	ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	30
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	31
3.1	Ռիսկերի գնահատում	31
3.2	Արտանետումների աղբյուրները.....	32
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն.....	32
3.3.1	Մթնոլորտային օդ.....	32
3.3.3	Հողային ռեսուրսներ	34
3.3.4	Կանաչապատում	35
3.3.5	Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները.....	35
3.3.6	Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ	36
3.3.7	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	36
3.3.8	Աղմուկ	38
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	43
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	49
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	45
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	46

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝

Արմեն Անդրեասյան

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝

Ք.Աբովյան, Ավագյան փ. 1/40տ

1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության
հասցեն՝

Ք. Աբովյան Բարեկամության փ. 2/1

1.5 Նախատեսվող գործունեության վարչական
տարածքը՝

Կոտայքի մարզ Աբովյան համայնք

1.1 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

ՀՀ Կոտայքի մարզ Բարեկամության փողոց 2/1 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Բազմաբնակարան բնակելի շենքի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման հաշվետվությունը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքը խմբագրված (03.05.23 ՀՕ-150-Ն);
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,
13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի

Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

16. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

17. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

18. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

19. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

20. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

21. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967- Ն որոշում,

22. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

23. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Բազմաֆունկցիոնալ շինության աշխատանքային նախագիծը պատվիրել է՝ Մարգ Կոտայք, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, Բարեկամության փողոց 2/1 հասցեում, բնակելի կառուցապատման գոտում գտնվող հողատարածքի սեփականատեր՝ Արմեն Անդրեայանը: Նախագծման համար հիմք են հանդիսանում՝ «ՀՀ Կոտայքի մարզի, Աբովյան համայնքի կողմից 12 հունիսի 2024թ.-ին տրված N 427 նարտարապետահատակագծային առաջադրանքը - Անշարժ գույքի պետական գրանցման N 28032024-07-0177 վկայականը: - Պատվիրատույի առաջադրանքը - Հողամասի տեղագրական հանույթը - Ինժեներաերկրաբանական հետազոտությունների արդյունքները Հողատարածքի ընդհանուր մակերեսը 0.60247 հա է: Հողատարածքը անբարեկարգ է, ունի փոքրինչ ռելիեֆային թերություն: Նախագիծը մշակվել է անշարժ գույքի սեփականության վկայականով տրված հողամասի սահմաններում: Նախագծով նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ շենք: Նախագծվող շինությունը նախատեսվում է սեյսմիկ կարանների միջոցով բաժանել 3 մասնաշենքերի, ապահովելով անհրաժեշտ էվակուացիոն ելքերը բոլոր սեկցիաներից: Համաձայն նախագծի, շինության երկու մասնաշենքերը ունենալու է 15 վերգետնյա և 1 ստորգետնյա հարկեր, իսկ մեկ մասնաշենքը ունենալու է 16 վերգետնյա և 1 ստորգետնյա հարկեր: Նկուղային հարկը ծառայում է որպես ավտոկայանատեղի 91 մեքենայի համար, իսկ պատերազմական իրավիճակներում որպես ապաստարան: Նկուղային հարկի արտաքին չափերով մակերեսը կազմում է՝ 3646.7քմ: Ստորին հարկերում նախատեսվում է նաև տեղակայել պոմպակայան, էլ վահանային, և այլ տեխնիկական սենյակներ: Ծիֆության առաջին հարկը 0.00 միշում ծառայելու է որպես հասրակական տարածքներ: 4.20 միշից սկսած 15 հարկերը նախատեսվում է բնակելի նշանակության: Ծիֆության արտաքին առավելագույն չափերը կազմում են՝ 70.1x47.6մ: Ծիֆության առաջին հարկի միշից հաշված առավելագույն բարձրությունը կազմում է 58.4մ: Ծիֆության արտաքին չափերով մակերեսը 0.00 միշում կազմում է 2034.6քմ, տիպարային հարկերից (4.20 47.1 միշեր: 14հատ հարկ յուրաքանչյուրում կազմում է՝ 2308.5քմ և յուրաքանչյուր հարկում նախատեսվում է 25 բնակարան: Իսկ 50.4 միշում արտաքին չափերով մակերեսը կազմում է 2308.5քմ և նախատեսվում է 13 բնակարան: Տանիքի արտաքին չափերով մակերեսը 53.7 միշում կազմում է 1210.6քմ: Բոլոր հարկերի մակերեսների հանրագումարը հաշված 0.00 միշից և ներառյալ տանիքները կազմում է 37872.7քմ: Տանիքը հարթ է ներքին կազմակերպված ջրահեռացմամբ: Նախատեսվում է ընդհանուր 363 հատ բնակարան: Ուղղաձիգ կապը շինության հարկերում ապահովված է աստճանավանդակի և վերելակի միջոցով: Աստճանավանդակում դռները նախատեսված են հակահրդեհային և ինքնափակվող մեխանիզմներով: Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Ծիֆության կոնստրուկտիվ համակարգը իրենից ներկայացնում է միաձույլ ե/բ շրջանակակապային կրող համակարգ՝ միաձույլ սալերով և ժապավենաձև հիմքերով: Արտաքին պատերը վերգետնյա հարկերում նախատեսվում է իրականացնել ամրանավորված բետոնե բլոկներով, բազալտե մանրաթելային ջերմամեկուսիչ նյութով՝ արտաքին կողմից երեսապատված տրավերտինե կամ տուֆե սալերով: Հողատարածքում գոյություն ունեցող ինքնակամ պարիսպը նախատեսվում է ապամոնտաժել 31քմ մակերեսով: Ծավալը 67խմ: Հողատարածքում ծառեր առկա չեն: Կանաչապատ տարածքի բարեկարգման մակերեսը կազմում է 2882.4 քմ: Ծինարարության ժամանակ կատարվելու են հետևյալ հողային աշխատանքները՝ հանույթ – 14600 խմ, պահպանվող հանույթ հետիցք – 4000 խմ, ընդհանուր ետիցք 6000խմ, տեղափոխվող հանույթի քանակ 10600խմ: Ծինարարության ընթացքում հանվող գրունտի մի մասը տեղափոխվելու է Աբովյանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր, իսկ մնացած մասը որը անհրաժեշտ է ետիցքի համար տեղակայվելու է հողատարածքում

նախատեսված վայրում: Հողատարածքում մնացող գրունտը պահպանվելու է խոնավ վիճակում՝ փոշուց գերծ մնալու համար:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

- Հողամասի մակերեսը - 6024.7 մ²
- Կառուցապատման մակերեսը - 2034.6 մ² - 33.8%
- Սալվածքների մակերեսը - 1107.7 մ² - 18.4%
- Կանաչապատման մակերեսը - 2882.4 մ² - 47.8%
- հարկայնություն - 1 նկուղային և 16 վերգետնյա
- Բնակարանների քանակ - 363 հատ
- Ավտոկայանատեղիների քանակ - 89 հատ
- Ընդհանուր շինարարական մակերես - 41518.7 մ² (ներառյալ տանիքները)

Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,

- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն:


Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի ավտոկայանատեղիներում նախատեսված է մեխանիկական արտածման-ներածման օդափոխություն: Համակարգը դրսում +5 °C -ից ցածր ջերմաստիճանի դեպքում նպահատակահարմար է գործարկել միայն CO գազի անթույլատրելի կոնցենտրացիայի դեպքում: Թարմ օդ վերցնելու համար նախատեսված է օդառի հորան համալիրի բակային հատվածում: Ա1 և Ա2 համակարգերի տանիքային օդամղիչները տեղակայված են տանիքում: Օդատարները նախատեսված են ցինկապատ թիթեղից, հորիզոնական օդահավաքներին միանալու մասում տեղադրվում են հրակասեցնող կափույրներ: Բնակարանների սանհանգույցներից և խոհանոցներից նախատեսված են բնական արտածման համակարգեր՝ արտաձգիչ հորաններում տեղադրվող հրակայուն օդատարներով: Բնակարանների ներսում ցուցադրված կենցաղային օդափոխիչների, ծխահեռացման հովանոցների, օդատարների տեղաբաշխումն ունի խորհրդատվական նշանակություն, այդ պատճառով ծավալաթերթում դրանք ընդգրկված չեն: Բնական արտածման օդատարները հորանի մեջ բարձրանում են 2,5 մ, վեջին երկու հարկերի օդատարները հասնում են մինչև հորանի վերի մակարդակը : Նմանահամակարգը թույլ է տալիս խուսափել ծխի տարածումից : Տանիքից դուրս եկող բոլոր օդատարները ջերմամեկուսացվում են: Տանիքում տեղադրվում են դեֆլեկտորներ:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Համալիրի Էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր Էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:


Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Կոտայքի մարզ
Արովյան համայնք, Արովյան քաղաք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-002-0121-0017
Մասշտաբ 1: 1000



	Կոորդինատներ	
	X	Y
1	8468095.8103	4460781.5627
2	8468198.0773	4460734.9197
3	8468225.8621	4460793.9079
4	8468129.5490	4460837.3070
5	8468132.1086	4460842.7336
6	8468126.6740	4460845.2712
7	8468124.0581	4460839.8715
8	8468121.6695	4460834.9409
9	8468121.4877	4460834.5658

ՉԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:500




ԱՌՈՂՈՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Է. ԲԱՐԱՅԱՆ



ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	Տ. ԱՆՈՒՑԱՆ	ՏԵԽՆԻԿԱՆ ՏԵՍՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
1	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
2	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
3	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
4	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
5	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
6	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
7	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
8	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
9	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
10	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
11	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
12	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
13	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
14	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
15	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
16	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
17	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
18	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
19	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
20	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ
21	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ	ՎԵՐԱՄԱՐՈՒՄ



1.3.2 Շինարարական աշխատանքների իրականացման աշխատանքային ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տնոդությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՄՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնոդությունը ծրագրվում է 36,0 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.3.3 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 65 մարդ, որից

Ինժեներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

1.3.4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է՝ 420 խմ (այդ թվում քանդումից առաջացող) և կենցաղային աղբը՝ $34 \times 7 \times 44 / 1000 = 10,5$ տ: Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma. \text{н.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 6 մարդ

N– ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 28 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1320 օր

$$W_{\Sigma. \text{н.}} = (6 \times 0.016 + 28 \times 0.025) \times 1320 = 1050 \text{ խմ/շին. ժամ:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 3200 քմ,

K_1 – 1 քմ օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 880

$$U_1 = 3200 \times 0.0015 \times 880 = 4224 \text{ խմ./շին.ժամ.}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 5274 խմ/շին. ժամ:

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է միանալով Վեոլիա Ջուր ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը՝ $D=160$ մմ ջրատարից, ջրահեռացումը՝ Բարեկամության փողոցով անցնող $D=400$ մմ կոյուղատարին:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Վեոլիա Ջուր ՓԲԸ հետ կնքելով համապատասխան պայմանագիր: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի՝ կառուցելով 10 կՎ ստորգետնյա մալուխագիծ, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Տարածքում նախատեսվում է տրանսֆորմատորային ենթակայան):

Նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Շինարարական տեխնիկաՇինարարության հրապարակի կազմակերպման աշխատանքների փուլ

- Վերամբարձ ավտոկռունկ Q TZ 160:


Հողային աշխատանքների փուլ

- Էքսկավատոր CAT 320:
- Բուլդոզեր CAT D6R:

Շինմոնտաժային աշխատանքների փուլ

- Ավտոբետոնախառնիչ СБ-126:
- Բեռնատար ինքնաթափ MA3 5550
- Շարժական կոմպրեսոր ЗИФ-55 В:
- Էլեռակցման սարք CTH 500:

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊԱՍՏԱԾՎՈՂ ԻՆՔԼԱԿԱՍ ՊԱՐԻՍՊ Մ1:250



ප්‍රශ්න 300කින් සමන්විත වේ.

 ANTONYAN PROJECT	ԳԼԽ ԴԱՏԱԴՐՈՒՄ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ	 ԲԱՐՈՋԱՆԱԳՐԱԿԱՆ ԶԵՆՈՒ ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱՆ	ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱՆ ԲԱՐՈՋԱՆԱԳՐԱԿԱՆ ԶԵՆՈՒ ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱՆ		
	ԱՆՏՈՆՅԱՆ ԱՎԱԿԱՐԳԻ ՄԵՐ ՏՈՐԵՐ ԵՄ ԻՄՔԼՈՒԹՅԱՆՈՒԹՅԱՆ	ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱՆ ԲԱՐՈՋԱՆԱԳՐԱԿԱՆ ԶԵՆՈՒ ԿԱՌԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՐԱՆ	ԲԻՆԻ	ԳՐԱԲԱՐՈՒՄ	ԳՐԱԲԱՐՈՒՄ



2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի վարչական տարածքում, 2-րդ Միկրո կոչվող տեղանքում, Բարեկամության փողոցին հարող տարածքում: Տարածքում առկա է քանդման ենթակա 31 քմ մակերեսով ինքնակամ կառուցված պարիսպ: Նախատեսվող համալիրի շենքերից 7մ և ավել հեռավորության վրա են գտնվում այլ բնակելի հասարակական շենք շինություններ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Կոտայքի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավային մասում, համեմատաբար հարթ տեղանքում: Տեղամասը հյուսիսային և արևելյան կողմերից սահմանափակված է ասֆալտապատ ճանապարհների պաստառներով:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1393.0-1395.0 մետրի սահմաններում:

Ջրային ցանցը տարածաշրջանում քիչ զարգացած է, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը, և նրա ձախակողմյան վտակ Գետառ գետը: Հրազդան գետի ռեժիմն ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ հիդրոտեխնիկական կառույցներով, ինչպես նաև մանր ջրահոսքերով և ջրանցքներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չոբրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին:

Երկրաբանական կառուցվածքը մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխանստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմահարված երոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ: Նախագծվող շինության հարթակը ներկայացնում են վերին պլիոցեն դարակարգի հրաբխային արմատական ապարները՝ բազալտները, բազալտի բեկորային գրունտները նաև խարամացված խճային խճավազային գրունտները, լիցքերը:

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ չպատկապնդված, խճա-մանրախճային կազմի, կավային և ավազային նյութի խառնուրդով մինչև 30%, շինարարական և կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-1.0 մետր: Տեխնածին առաջացումներ:

Շերտ թիվ-2 կավավազ կարբոնատացած, խճա-մանրախճային կազմի, հազվադեպ բեկորներով, հրաբխային ապարներից և քոեճից, կարբոնատացած փոշենման ավազային լցանյութով մինչև 20%, գրունտը մասամբ(տեղ-տեղ) ցեմենտացած է, գրունտը սակավախոնավ է, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.5-2.0 մետր: Չորրորդականի հասակի էյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ:

Շերտ թիվ-3 խճա-բեկորային գրունտ հրաբխային ապարներից, կավավազային և խարամա-ավազային լցանյութով մինչև 40%, բազալտների բեկորներով, գրունտը միջին խտության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.0 3.0 մետր: Չորրորդականի հասակի էյուվիալ առաջացումներ:

Շերտ թիվ-4 բազալտ, անդեզիտա-բազալտ, թույլ ծակոտկեն, ճեղքավորված, մեծաբեկորային անջատումներով, խարամա-ավազային գրունտների բներով և ոսպնյակներով, արմատական տեղադրմամբ, միջին ամրության, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 3.0-14.0 մետր: Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ:

Շերտ թիվ-5 խարամ հրաբխային, ավազա-մոխրային, մասամբ խճա-ավազային կազմի, հազվադեպ բեկորներով, տեղ-տեղ փոշային կազմի, մասամբ կավավազային նյութի պարունակությամբ, գրունտը փոքր խտության է, լցանյութը սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 4.0-15.0 մետր: Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ:

Հիդրոերկրաբանական պայմանները Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համա խմբերի հետ, պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 25.0 մետր խորությունը չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 30.0 մետրից խորը, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ մակերեսային ջրերը, ներթափանցելով գրունտային զանգվածների ավելի խորը տեղադրված շերտերի մեջ, կուտակվելով և զետեղվելով հրաբխային առաջացումների պալեոռելիեֆի "փոս ընկած", ճկված, խորդուբորդ մասերում, կարող են առաջացնել "թաքնված" ջրափոսեր, ջրակալված և խոնավացած տեղամասեր (վերնաջրեր):

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20-04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$:

9. Եզրակացություններ

1. Ինժեներա-երկրաբանական հետազոտություններն իրականացվել են համաձայն տեխնիկական առաջադրանքի: Հետազոտական աշխատանքների ընթացքում, առաջադրված խնդիրների լուծման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, հորատանցքերի հորատում, գրունտներից փորձանմուշների ընտրում և փորձարկում, նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախագծա-հետազոտական կազմակերպությունների կողմից տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում:
2. Հետազոտվող տեղամասը տեղադրված է Աբովյան քաղաքի հարավային եզրամասում, Բարեկամության փողոց 2/1 հասցեով, Բարեկամության և Ինտերնացիոնալ փողոցների միջանկյալ մասում:
3. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Կոտայքի հրաբխային սարավանդի սահմաններում, նրա հարավային մասում, համեմատաբար հարթ տեղանքում: Տեղամասը հարավային և արևմտյան կողմերից սահմանափակված է ասֆալտապատ ճանապարհների պաստառներով:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1393.0-1395.0 մետրի սահմաններում::

Համաձայն ՀՀՇՆ II-7.01-2011 (Շինարարական կլիմայաբանություն) տեղամասը գտնվում է ՀՀ կլիմայական շրջանացման Չափավոր տաք կլիմայական գոտու մեջ:

Մեյսմա-տեկտոնական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևանյան միջլեռնային ճկվածքի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ մարզերից մեկը:

4. Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախըմբերի հետ, պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին, որոնք հորատանցքերով մինչև 25.0 մետր խորությունը չեն բացահայտվել, ըստ հրատարակված գրականության տվյալների հետազոտվող տեղամասում ստորգետնյա ջրերը տեղադրված են 30.0 մետրից խորը:
5. Հիմնվելով երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի ուսումնասիրության և գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ամփոփման արդյունքների վրա, հաշվի առնելով գրունտների երկրաբանական տարիքը, ծագումը և տարատեսակները, երկրաբանական հետազոտության 25.0 մետր հաստվածքում առանձնացվել են գրունտների 5 շերտեր՝

	24-16	Էջ
Ամսաթիվ 04.2024		12

—	լիցքային գրունտներ	—	շերտ թիվ 1
—	կավային գրունտներ	—	շերտ թիվ 2
—	խոշորաբեկորային գրունտներ	—	շերտեր թիվ 3 և 5
—	կիսաժայռային և ժայռային գրունտներ	—	շերտ թիվ 4

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ցուցանիշները տրված են սույն եզրակացության 6-րդ բաժնում:

6. Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, բացակայում են, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ կավավազները (շերտ թիվ 2) և խճային գրունտների լցանյութը ցուցաբերում են ենթաոդոզամաշման (субфозия) առանձնահատկություններ, ուստի պետք է մշակել բոլոր տեսակի մակերեսային ջրերի կազմակերպված և կանոնավորված ջրհավաք ու ջրհեռ համակարգ դրանց մուտքը հիմնատակեր բացառելու համար:
7. Համաձայն ՀՀՇՆ 20-04 շրջանը և հետազոտվող տեղամասը մտնում են II (երկրորդ) սեյսմիկ գոտու մեջ:
8. Հետազոտվող տեղամասը կառուցապատման նպատակով իրացման համար ունի պայմանական բարենպաստ ինժեներա-երկրաբանական և բնակլիմայական պայմաններ:

Ինժեներ-երկրաբան
Գլխավոր մասնագետ՝



Ն. Ալեքսանյան



Ամսաթիվ

04.2024

24-16

Էջ

13

2.1 ԿԼԻՄԱ

Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Արզնի օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -28°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+38^{\circ}\text{C}$: Օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը կազմում է 65 %: Տարեկան տեղումների քանակը 475 մմ: Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, 1.8 մ/վ:

Ցուցանիշները ներկայացված են «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» տվյալների համաձայն:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերև-ութար. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արզնի	-4.5	-2.5	2.8	9.5	14.2	18.7	22.3	22.3	18.2	11.5	4.9	-1.3	9.7	-28	38

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև- ութաբ. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Արզնի	78	74	67	65	64	58	53	49	57	65	74	79	65	78		52	

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների												Տարեկան		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արզնի	34	43	44	58	77	40	25	16	26	34	40	38	475	199	276
	14	20	23	33	30	24	30	23	42	25	19	39	42		

Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անոթրրի կրկնելիությունը,%	Միջին ամսական արագությունը,մ/վ	Գերակշռող արագությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող արագությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-արևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղվարդ	Հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	1,1	ՀսԱրլ	5,7	ՀսԱրլ	1,8
		1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7						
	Ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6				
		3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1						
	Հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4,8				
		4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8						
	Հոկտեմբեր	5	55	6	3	16	8	6	1	31	1,9				
		2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2						

2.2 ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Արբվյան համայնքի օդային ավազանի մթնոլորտային օդի որակի կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Արբվյան համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հաշվետվությունում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի՝ որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները, վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (<http://meteomonitoring.am/page/1591>) ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկագրի՝ Արբվյան համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 44400 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից, Արբվյան համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. Փոշու մասնիկներ՝ 0,095 մգ/լւմ, ածխածնի մոնօքսիդ՝ 1.1 մգ/լւմ, ազոտի երկօքսիդ՝ 0,033 մգ/լւմ և ծծմբի երկօքսիդ՝ 0,006 մգ/լւմ:

2.3 ՀՈՂԵՐ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:
- ❖ հանվող գրունտի քանակը կազմում է 14600 խմ, տեղափոխվողը՝ 10600 խմ, պահվողը՝ 4000 խմ:

2.4 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝

1. Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 10.5 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր: IV դասի վտանգավորության թափոն է: Էկոթունավոր է, հիմնական բաղադրիչներն են՝ սննդային մնացորդ՝ 25-30%, թուղթ՝ 20-25%, պոլիմեր՝ 15-30%, ապակի՝ 10-15%, փայտ՝ 5-10%, գործվածք՝ 10%, մետաղ՝ 12-15%:

2. մոտ 420 տ շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է Աբովյան համայնքի հետ համաձայնեցված վայր: IV դասի վտանգավորության թափոն է: Էկոթունավոր է, հիմնական բաղադրիչներն են՝ սննդային մնացորդ՝ 25-30%, թուղթ՝ 20-25%, պոլիմեր՝ 15-30%, ապակի՝ 10-15%, փայտ՝ 5-10%, գործվածք՝ 10%, մետաղ՝ 12-15%:

3. Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 10600 խմ ծավալով, կտեղափոխվի Աբովյան համայնքի հետ համաձայնեցված վայր: V դասի անվտանգ թափոն է, թունավոր հատկություններ չունի, հիմնականում հողային զանգված է:

4. Եռակցման աշխատանքներից առաջացող «Եռակցման խարամ» 0,15տ շին. ընթացքում: Ծածկագիրը՝ 3140480001994: IV դասի վտանգավորության թափոն է:

Էկոթունավոր է, հիմնական բաղադրիչներն են՝ FeO-27,68%, CaO-13,20%, MnO-12,55%, SiO₂ – 43,9%, Ti O₂ -2,64%, Pb-0,02%, Cd- 0,001%, Sb-0,008%:

Վտանգավոր թափոնների գործածությունը՝ ըստ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի կիրականացվի համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

2.5 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Արովյան քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Համաձայն Ա. Մագակյանի հետազոտությունների, Արովյան քաղաքը գտնվում է Գեղամա բուսաբանաաշխարհագրական ֆլորիստական շրջանում:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

Ինչպես բուսական, այնպես էլ կենդանական աշխարհի ներկայացուցիչների հիմնական մասը բնորոշ է միջին բարձրության լեռնային, տաք, չափավոր չորային կլիմայով տափաստանային լանդշաֆտային զոնային:

2.6 Բուսական աշխարհ

Բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկա- տարազգի ներկայացուցիչները: Համաձայն նախկինում կատարված հետազոտությունների, այստեղ՝ անդեզիտա-բազալտային և տուֆալավային մայր ապարների վրա տարածված տարալվացված տիպիկ և սովորական սևահողերով տափաստանային տարածքներում կարելի է հանդիպել մոտ 150 բուսատեսակ: Դրանցից, որպես դոմինանտ կամ բնորոշ տեսակներ կարելի է նշել Իժալեզվազգիներից - OPHIOGLOSSUM YULCATUM (իժալեզու հասարակ), նոճազգիներից - JUNICPERUS EXCELSA (գիհի բազմապտուղի), հովանոցազգիներից -

OPOPAHAX PERSICUM (ճավշիկ պարսկական), ցախակեռասագլխերից - SAMBUCUS TIGRANII (թանթրվենի Տիգրանի), ազգաթոփազգիներից - EMPERTRUM HERMAPHRODITUM (ակնաթուփ երկսեռ) Festuca sulcata (շուղախոտ), Artemisia austriaca Jack. (բարձրավենյակ), Koeleria nitidula Vel. (կելերիա), Thymus-ի տեսակներ (ուրց), Aegilops cylindrical Host. (այծակն), Scabiosa virgata Grossh. (քոսքունկ), Achillea micranta M.B. (հազարատերևուկ) և այլն:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը: Մասնագետների կարծիքով այսօր Հայաստանում պահպանության կարիք ունի ֆլորայի տեսակների մոտ 50 տոկոսը:

Ստորև, աղյուսակում բերված են Աբովյան քաղաքի մերձավոր տարածքներում պահպանության կարիք ունեցող բուսատեսակները: Հարկ է նշել, որ աղյուսակը կազմված է ՀՀ բուսականության Կարմիր Գրքի հիման վրա, որում գրանցված են պահպանության կարիք ունեցող ֆլորայի 387 տեսակ (տեսակների ընդհանուր թվի 14 տոկոսը): Աղյուսակում բերված է նաև յուրաքանչյուր տեսակի պահպանության կարգավիճակը ըստ Կարմիր Գրքում կատարված դասակարգման (1- անհետացման վտանգի տակ գտնվող, 2 - հազվագյուտ):

2.7 Կենդանական աշխարհ

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության (մոտ 1600 մ ծովի մակերևույթից բարձր) լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտագոնալ բնակավայրերին (կմախքային սարեր, քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Համաձայն հրատարակված տվյալների, այս լանդշաֆտային զոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (որոնցից 82-ը՝ հանդիպում են նաև արտագոնալ բնակատեղերում), այդ թվում՝ 28 (20) կաթնասուն, 67 (41)՝ թռչուն, 15 (8)՝ սողուն և 3 (3)՝ երկկենցաղ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տվյալ տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Canis lupus (գայլ), Vulpes vulpes L. (աղվես), Cricetus auratus Nat. (զերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L. (կաքավ), Grus grus L. (կռունկ) և այլն:

2.8 ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Հրազդան գետն է: Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակն է: Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքս գետը: Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գավարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150 մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքս: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետերը, Գետառը: Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը գարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Հայաստանի Հանրապետության մակերևութային ջրերի մոնիթորինգը իրականացվում է ՀՄԿ ՊՈԱԿ -ի կողմից: Տվյալները ներկայացվել են 2024 թ տարեկան շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկագրից:

Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Քասախ գետի՝ Ապարան քաղաքից վերև և ներքև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս և 5-րդ դասից՝ 4-րդ դաս համապատասխանաբար: Աշտարակ քաղաքից վերև և ներքև դիտակետերում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Գեղարոտ գետի՝ գետաբերանի դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Հրազդան գետի՝ Գեղամավան գյուղի մոտ և Քաղսի գյուղից ներքև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Մարմարիկ գետի՝ Հանքավան գյուղից վերև դիտակետում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Տանձաղբյուր գետի՝ Ծաղկաձոր քաղաքից վերև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս:

Համաձայն 2025թ 2-րդ եռամսյանի տարեկան շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկագրի Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արգել գյուղից ներքև հատվածներում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Արգելի ՀԷԿ-ից վերև հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ՝ ապրիլին՝ «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Գեղանիստ գյուղի մոտ ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս), Երևանյան լճի մուտքի մոտ՝ ապրիլին՝ «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հունիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ ապրիլին՝ «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս),

հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ ապրիլին և հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):

**3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՄԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- տարածքում առկա կիսաքանդ լողավազանի քանդումից
- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հաշվետվությունում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով;
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,

- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» նորմով նախատեսվող միջոցառումներ

- Շինարարության փուլում փոշեռաջացումը ճնշելու նպատակով նախատեսվում է տեղադրել 1 հատ ջրային մառախուղի սարքավորումներ:
- Փոշեռսիչ և փոշեճնշիչ սարքավորումների (Dust Collectors) Հոկման ժամանակ առաջացող մանրադիսպերս փոշի (բետոնային, ցեմենտային, գիպսային, փայտի): Արտանետումների արդյունավետ կառավարման համար կիրառվում է տեղային փոշեկլանմամբ հղկող սարքավորումներ, որոնք հազեցած են փոշեկլանիչ կափարիչով, որը փակում է հոկման գոտին և կանխում է փոշու տարածումը շրջակա միջավայրում, հղկող մեքենան միացվում է փոշեկլանիչին: Սարքի աշխատանքի ժամանակ ջրօգատործում չկա:
- շինարարական հրապարակի ժամանակավոր ճանապարհները ծածկվում են բետոնով, իսկ մնացած տարածքները՝ խճի շերտով՝ փոշու առաջացումը բացառելու համար:
- Աշխատանքային գոտում փոշու արտանետումները կանխելու և նվազագույնի հասցնելու համար՝ պետք է կիրառվեն փոշեճնշիչ մեթոդներ և փոշենստեցման միջոցառումներ՝ ելնելով բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվներից, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի № 160-Ն որոշման Հավելված N 1-ով:
- Փոշեճնշման և փոշենստեցման միջոցառումների նկատմամբ հետևողական և պատշաճ վերահսկում ապահովելու համար՝ այդ աշխատանքների արդյունքները կապալառուի կողմից պետք է լրացվեն շինարարության վարման մատյանի «Փոշենստեցման և փոշեճնշման միջոցառումների գրանցում» բաժնում՝ վավերացվեն պատասխանատու մասնագետների ստորագրությամբ:

Փոշենստեցման և կառավարման միջոցառումները ներառում են.

- 1) շինարարական հրապարակի խնամքը՝ կանոնավոր մաքրումը և պատշաճ կահավորումը,
- 2) փոշեպաշտպան պատնեշների և ցանցերի օգտագործումը շինարարական հրապարակի սահմանագծով՝ փոշու տարածումը շինարարական հրապարակից դուրս սահմանափակելու համար, ինչպես նաև՝ կառուցվող շենքերի թաղանթապատումը և ցանցապատումը (փոշու առաջացման օջախներում), ներքին տարածությունների մեկուսացումը շրջապատից՝ փոշու տարածումը մթնոլորտ կանխելու, այն աշխատանքային առանձին հատվածներում տեղային չեզոքացնելու համար,
- 3) նյութերի կառավարումը՝ ապահովում է փոշի առաջացնող նյութերի (ցեմենտ, ավազ, գաջ, խիճ և այլն) տեղափոխումը և պահպանումը հատուկ մեթոդներով՝ բացառելու համար նրանցից փոշու առաջացումը,
- 4) օդի որակի մոնիտորինգը՝ որի իրականացման համար շինարարական հրապարակները պետք է հագեցվեն անհրաժեշտ սարքավորումներով՝ մթնոլորտային օդում փոշու մակարդակը մշտադիտարկելու և վերահսկելու համար:
- 5) Հարակից տարածքներում զգայուն օբյեկտներ չկան:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ (քամի անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ եղանակ, թանձր մառախուխ, ամպրոպ) իհայտ գալու դեպքում՝ ըստ իրավիճակի, կիրառվում են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի քանակի և հաճախականության ավելացում,
- աշխատանքի տևողության կրճատում,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալների նվազեցում,

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ

տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Հետլիցքի համար հողը կպահվի շինարարության կազմակերպման գլխավոր հատակագծի վրա նշված հատվածում՝ պայմանական կետ 6 , մակերեսը կտոփանվի և պարբերաբար կջրցանվի:

3.3.4 Կանաչապատում

- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 2882,4 քմ:
- Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 300 խմ բուսահող, որի ձեռքբերումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով դիմելով Արմավյան համայնքին:
- Տարածքում նախատեսվում է տնկել/նախնական ցանկ, վերջնական քանակական և տեսակային կազմը կհաստատվի համայնքի կողմից համաձայնեցվելուց հետո/ Կատալպա – 3 հատ, Կաղնի ամառային 7 հատ, Թխկի սրատերև - 12 հատ, Փովոդ գլիի - 3 հատ, Սյունաձև թույա - 3 հատ, Ասպիրակ - 18 հատ, Բարբարիս - 16 հատ, Կիպրոս - 650 հատ (135 գծմ), Թզուկ վարդեր - 450 հատ, Սիզամարգ – 2800 քմ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 3 տարի, նշված հարցը կհստակեցվի մոտ 2 տարի հետո:
- Ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային:

3.3.5 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը

իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է :

Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

3.3.6 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Հարևան տարածքներում կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

3.3.7 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները

- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին

բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի շենքում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.8 Աղմուկ

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում հողային աշխատանքների իրականացնող տեխնիկան, իսկ շենքերի կառուցման ընթացքում կռունկ: Հաշվարկը արված է ենթադրելով, որ այս շին.տեխնիկական շահագործվում է միաժամանակ յուրաքանչյուր շինարարության փուլում՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left(\frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{kB} \right)$$

Շինարարության հրապարակի կազմակերպման աշխատանքների փուլ

- Վերամբարձ ավտոկռունկ QTZ 160` 102 դԲ:

Յողային աշխատանքների փուլ

- Էքսկավատոր CAT 320` 102 դԲ:
- Բուլդոզեր CAT D6R` 97դԲ:

Շինմոնտաժային աշխատանքների փուլ

- Ավտոբետոնախառնիչ СБ-126` 96 դԲ:
- Բեռնատար ինքնաթափ MA3 5550` 95 դԲ:
- Շարժական կոմպրեսոր ЗИФ-55 В` 92 դԲ:
- Էլեռակցման սարք СТН 500` 90 դԲ:

Յեռավորություն (r)` 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն` համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագիտական հաստատունը` մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է`

- Վերամբարձ ավտոկռունկ QTZ ` 102+10·log₁₀ (0.02006366)= 85.03 դԲ:
- Էքսկավատոր CAT 320-102` 102+10·log₁₀ (0.02006366)=85.03դԲ :
- Բուլդոզեր CAT D6R` 95+10·log₁₀ (0.02006366)=78.03 դԲ:
- Ավտոբետոնախառնիչ СБ-126` 95+10·log₁₀ (0.02006366)=78.03 դԲ:
- Բեռնատար ինքնաթափ MA3 5550` 95+10·log₁₀ (0.02006366)= 78.03 դԲ:
- Շարժական կոմպրեսոր ЗИФ-55 В` 92+10·log₁₀ (0.02006366)= 75,03 դԲ:
- Էլեռակցման սարք СТН 500` 90+10·log₁₀ (0.02006366)= 73.03 դԲ:

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է`

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով`

$$LA_{\text{էլլ}} = 10 * \log_{10}(10^{\{85.03/10\}} + 10^{\{85.03/10\}} + 10^{\{78.03/10\}} + 10^{\{78.03/10\}} + 10^{\{78.03/10\}} + 10^{\{75.03/10\}} + 10^{\{73.03/10\}}) = 89,44 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում նշված տեխնիկայի միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 89,44 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 7850 կգ/մ³:

Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման Էկրան:

Պաշտպանիչ Էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$$L_{\text{աղ}} = 23 * \lg * m_{\text{է}} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^3$$

$$L_{\text{աղ}} = 13 * \lg * m_{\text{է}} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^3$$

Որտեղ $m_{\text{է}} = K * m$ - մակերեսի խտության Էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ³,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ³

$$m_{\text{է}} = 7850 * 1 = 7850$$

$$L_{\text{աղ}} = 23 * \lg * m_{\text{է}} - 13 = 23 * \lg(7850) - 13 = 23 * 3.894 - 10 = 89.562 - 10 = 79.56 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է`

$$LA_{\text{տաղ}} = LA_{\text{էլլ}} - L_{\text{աղ}} = 89,44 - 79.56 = 9,88 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը կկազմի 9,88 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթում

Թրթման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթման արագացում		Թրթման արագություն	
	մ/վրկ ² .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
Ոչ մշտական թրթման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Ոչ մշտական թրթման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Շինարարության ընթացքում թրթման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4. Շահագործման փուլ

4.1 Արտանետման աղբյուրներ

Շահագործման փուլում ստացիոնար արտանետման աղբյուրներ չկան՝ կենտրոնացված կաթսայատուն չի նախատեսվում:

4.2 Արտահոսքեր

Շահագործման փուլում առաջացող կենցաղային հոսքաջրերը բակային ցանցի միջոցով կուղորդվեն <<Վեռլիա ջուր>> ՓԲԸ համակարգ:

4.3 Ճանապարհների ծանրաբեռնվածություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արովյան համայնքի նշված հատվածի ճանապարհների ծանրաբեռնվածությունը մեծ չէ (քանի որ խիտ բնակեցված չէ), բնակելի համալիրի կառուցման հետևանքով համայնքի ճանապարհների վրա զգալի ազդեցություն չի ակնկալվում:

4.4 Թափոններ

Շահագործման փուլում կառաջանա կենցաղային աղբ: Համալիրի տարածքում նախատեսվում է տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ, տարածքում բացառվելու է աղբի կուտակումը, այն ամենօրյա ռեժիմով պայմանագրային հիմունքներով կհեռացվի աղբահավաք ծառայության կողմից համայնքային աղբավայր:

4.5 Սոցիալական ազդեցություններ

- Բնակարանային ֆոնդի ավելացում և բնակարանային պայմանների բարելավում:
- Շինարարության ընթացքում և շահագործումից հետո նոր աշխատատեղերի ստեղծում:
- Տարածքի բարեկարգում, նոր ենթակառուցվածքների (լուսավորություն, կանաչապատում) զարգացում:
- Տեղական խանութների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ, ինչը կարող է նպաստել տեղական տնտեսության զարգացմանը:

5. Մշտադիտարկումների իրականացման պլան

Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Կենսաբազմազանության մոնիթորինգ ամիսը մեկ հաճախականությամբ
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
7. Կանաչապատման ենթակա տարածքների խնամքն ու պահպանությունը իրականացնել կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշում պահանջներին համապատասխան:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 2360000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	200000	200000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x45000	1620000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x25000	300000
Կենսաբազմազանության մոնիթորինգ	12x20000	240000
Ամբողջ շինարարության համար		2360000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Քանդման և Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	(a) Քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(d) - օղի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս; (e) - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով; (f) - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով; (g) - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով, (h) - շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվտանգությունը լվանալ, (i) - հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ, (j) - ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով: (k) - պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում: (l) քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» նորմով նախատեսվող միջոցառումներ

		(m) - Շինարարության փուլում փոշեառաջացումը ճնշելու նպատակով նախատեսվում է տեղադրել 1 հատ ջրային մառախուղի սարքավորում: (n) - Փոշեռսիչ և փոշեճնշիչ սարքավորումների (Dust Collectors) Հղկման ժամանակ առաջացող մանրադիսպերս փոշի (բետոնային, ցեմենտային, գիպսային, փայտի): Արտանետումների արդյունավետ կառավարման համար կիրառվում է տեղային փոշեկլանմամբ հղկող սարքավորումներ, որոնք հագեցած են փոշեկլանիչ կափարիչով, որը փակում է հղկման գոտին և կանխում է փոշու տարածումը շրջակա միջավայրում, հղկող մեքենան միացվում է փոշեկլանիչին: Սարքի աշխատանքի ժամանակ ջրօգատործում չկա: (o) - շինարարական հրապարակի ժամանակավոր ճանապարհները ծածկվում են բետոնով, իսկ մնացած տարածքները՝ խճի շերտով՝ փոշու առաջացումը բացառելու համար:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:
Արտակարգ իրավիճակների	Շինարարական աշխատանքների	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;

կառավարում	հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
Կենսաբազմազանություն	Ծառափային բուսականության վրա ազդեցություն	- Տարածքում աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով: - Բուսականության պահպանում և կառավարում

		- Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով, - Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում: - Տարածքում հատման ենթակա ծառեր կամ թփեր չկան: - բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակ հայտնաբերելիս նախատեսել համապատասխան միջոցառումներ
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	- Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում - Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ
	Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն	- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները, անցումները, վտանգավոր զոնաները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին 78 աշխատանքի անվտանգություն թիվ 15-Ն հրամանի պահանջները, - ապահովել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա (համապատասխան արտահագուստի, բռնակների, բազրիքների, ամրագոտիների և սաղավարտների առկայություն), - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում՝ նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ, - աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

		- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ, - վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործունեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, - վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները, - նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս, - բացառել բեռի ամբարձիչից կախված մնալը ամբարձիչից աշխատանքի դադարի ժամանակ, - բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբեռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, - երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ, - տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար, - շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ, - շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, - կատարել հոսանքատար մասերի մեկուսացում, - վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար, - շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:
--	--	--

ՍՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Կենսաբազմազանություն	Բուսատեսակների, դրանց աճելավայրերի և պոպուլյացիաների վիճակի փոփոխության մշտադիտարկում	Գործունեության ենթակա տարածք	Արտաքին զննում, դաշտային հետազոտությունն	Շինարարության փուլում	Կապալառու

	Կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությանն ուղղված մշտադիտարկում:		եր		
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նախաձայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ